



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

12.04.2024թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 24 անդամները, բացակայում են՝ Տարոն Եփրեմյանը, Գառնիկ Սահակյանը և Սահակ Բաղդասարյանը: Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը, Ա. Ծերունյանը, Ս.Բալաբեկյանը:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Մուրադյանը, նախքան նիստի սկսվելը ներկայացրեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից առաջարկված նախագիծ 34-Ն-ը՝ «Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» խմբակցության առաջարկով հանվում է օրակարգից:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալոյանը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 4 նիստի օրակարգը՝ փոփոխված տարբերակով:

- 1) Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին:
- 2) Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
- 3) Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
- 4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
- 5) Սեփականության իրավունքով քաղաքացուն պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին: